

Օգոստոսյան վարժություններ

Պատճառական բայեր (Causative / Factitive)

ա խոնարհման ածանցավոր բայեր

բարձրաձայն (1եզ.անց.կատ. բարձրացայ; հրամ. բարձրա՛ցի՛ր, բարձրացե՛ք) չբ՛ բարձրանալ, վեր ելնել; երկարել, աճել (դեպի վեր)՝

բարձրացուցաձայն (1եզ.անց.կատ. բարձրացուցի; հրամ. բարձրացո՛ւ) պբ՛ բարձրացնել; գցել, տնկել; մեծարել, փառավորել, գովաբանել, փառաբանել; սաստկացնել (ձայնը)՝

Սահմ. ներկա		Անցյալ անկատար		Ստորադաս. 1-ին ապառնի		Արգելական հրամ.		
Եզ.	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.	սովոր.	պատճառ.
Եզ.	բարձրանամ բարձրանաս բարձրանայ բարձրանամք բարձրանաք բարձրանան	բարձրացունեմ բարձրացունես բարձրացունե բարձրացունեմք բարձրացունեք բարձրացունեն	բարձրանայի բարձրանայիր բարձրանայր բարձրանայիք բարձրանայիք բարձրանային	բարձրացունեի բարձրացունեիր բարձրացունե բարձրացունեաք բարձրացունեիք բարձրացունեին	բարձրանայցեմ բարձրանայցես բարձրանայցե բարձրանայցեմք բարձրանայցեք բարձրանայցեն	բարձրացուցանցեմ բարձրացուցանցես բարձրացուցանցե բարձրացուցանցեմք բարձրացուցանցեք բարձրացուցանցեն	մի՛ բարձրանար մի՛ բարձրացուցաներ	մի՛ բարձրացուցաներ մի՛ բարձրացուցանեք

Անցյալ կատարյալ		Ստորադաս. 2-րդ ապառնի		Բուն հրամայական		
Եզ.	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական	սովոր.	պատճառական
Եզ.	բարձրացայ բարձրացար բարձրացաւ բարձրացաք բարձրացայք բարձրացան	բարձրացուցի բարձրացուցեր բարձրացոյց բարձրացուցաք բարձրացուցիք բարձրացուցին	բարձրացայց բարձրացայցի բարձրացուց բարձրացուցուք բարձրացուցիք բարձրացուցին	բարձրացուցից բարձրացուցես բարձրացուցե բարձրացուցուք բարձրացուցիք բարձրացուցեն	բարձրացի՛ր բարձրացո՛ւ	բարձրացո՛ւ < *բարձրացո՛ւց բարձրացուցե՛ք

Ա. Վարժություններ բարձրաձայն բայով

- 1. «[հնդեվր. *h₁erǵ] բարձրանում էր X-ով [< պարթևերեն farr] գունդն հարայելեան»:
▶ ԵԼ
- 2. Մի թե «կանաչո՞ւմ է» [կանաչանամ] պրտու առանց ջրոյ, կամ կբարձրանա՞ [I ապառնի] կնիւն առանց ըմպելոյ:
▶ Մի թե
- 3. «Եվ X-ացավ [իրան. փոխառ.; հմմտ. սանս. बह् बहि-, հուն. παχύς] Y-ը [հնդեվր. *juHr-] և վեր հանեց [վերանամ չբ-ի պբ] տապանը, և բարձրացավ երկրից»:
▶ ԵԼ
- 4. «X [սանս. ցեղակից՝ पञ्चदश páñca-dāśa] կանգուն բարձրացավ Y-ը [հնդեվր. *juHr-] / Z [հնդեվր. *uperǵ] և ծածկեց բոլոր [ա-է սկսվում] լեռները»:
▶ X
- 5. «Եվ ես երբ բարձրանամ երկրից, բոլորին [աXXXXքXX դերանունը դրեք] կձգեմ դեպի [առ] ինձ [երկու բայն է՝ II ապառնի]»:
▶ «ԵԼ
- 6. «Որովհետև [նա] որ բարձրացնում է իրեն [բառացի՝ բարձրացնում է (իր) անձը], կխոնարհվի [խոնարհիմ չբ, II ապառնի], և որ խոնարհեցնում է իրեն [տույն ձևով], կբարձրանա [II ապառնի]»:
▶ Չի

Բ. Վարժություններ նույն բայի պատճառակաՆով՝ **բարձրացուցանեմ**

- 1. «Որովհետև [նա] որ բարձրացնում է իրեն [բառացի՝ բարձրացնում է (իր) անձը], կխոնարհվի [խոնարհիմ չք, II ապառնի], և որ խոնարհեցնում է իրեն [նույն ձևով], կբարձրանա [II ապառնի]»:
 - ▶ Չի
- 2. «Եվ ամենայն ժողովուրդներն արտահայտում էին [կշանակեմ նք] (իրենց) ուրախությունը և բարձրացնում էին իրենց **X**-երը [հնդեվր. *ǵʰ(μ)ǵ-ji-, հմմտ. ռուս. збои]»:
 - ▶ եւ
- 3. «Ասում է նրանց Հիսուսը. երբ որ **X**-ի [ուշադի՛ր. քերականական ստույգ նախածնը՝ հնդեվր. *myrtosjo] **Y**-ին [հնդեվր. *portijo-] բարձրացնեք [I ապառնի], յայնժամ կ...ք [հնդեվր. *μoid-; II ապառնի], թէ՛ ես եմ»։
 - ▶ Ա
- 4. «Իսկ երբ **X**-եց [ցեղակիցներ՝ հուն. κλύω, սանս. 𑀓 śru-, թէ՛ բարձրացրի իմ ձայնը [բարբառ] և **Y**-եցի [ցեղակիցներ՝ սանս. अलाला alalā և հատկապես հուն. ἀλαλαγή], իր ձորձերը թողեց [թողում նք] ինձ մոտ [սառանց լճու բառի, 3 տառով] փախավ [փախվիմ չք] ելավ [ելանեմ չք] դուրս [ա...]»:
 - ▶ Իսկ
- 5. «Բարձրացրի՛ր դու ինձ, տեր Աստված»։
 - ▶ բ
- 6. «Եվ որպես Մովսեսը բարձրացրեց **X**-ը [հնդեվր. *Hr̥ǵʰ-i-] անապատում, ...»։
 - ▶ և
- 7. «Այդ պատճառով [վասն այնորիկ] չպիտի [մի] բարձրացնես [II ապառնի] նրանց»։
 - ▶ Վ
- 8. «Փրկի՛ր **X** [հնդեվր. *t̥yo-] ժողովրդին և օրհնի՛ր **X** [հնդեվր. *t̥yo-] ժառանգությունները ('կավվածքները'), **Y**-ի՛ր [ցեղակից՝ սանս. अविपाल avi-pālā-] և բարձրացրո՛ւ նրանց մինչև հավիտյան»։
 - ▶ Փ

Հրաչ Մարտիրոսյան
31.08.2021 Լեյդեն / Բեռլին